

իաթը ծերութիւն է: Կովարած թաթոսը կ'երիտասարդանար Մանուկին մէջէն ու կը կրկնէր իր յանկերգը, առնուազն քսան անգամ:

-Վալլահ-պիլլահ, աղբէր ճան:

Յորմէհետէ կովերը շրջանաւարտ է ըրած (նոր բառ, զոր գեղացին կը գործածէր անինայ, ծաղրելու մէջ յամառելով նորեկու վարժապետ մը, որ երկու նախադասութեան մէջ իսկ պատեհութիւն կը գտնէր քշելու) անիկա կը խառնուէր ալ մարդոց կարծիքներուն: Ջարդերը զինք ըրին հայրենասէր ու իր խօսքի միջամուխ ըլլալը կը հանդուրժեն իր քաջութեանը իբր գիջում: Իր պաշտօնին բերումով՝ ան աւագակներու հետ իր քամարին արձանագրած է բախումներ: Պահած է իրեն ծանօթ քարայրներու մէջ մէկէ աւելի մահապարտներ, ամիսներով: Ու կ'ատէ թուրքը, որմէ կերած ծեծերուն յիշատակը կենդանի պատմում է՝ բոլոր գեղացիները շահագրգռող: Մարդիկ գիտեն նոյն ատեն, թէ մէկի դէմ տասնով այդ կռիւներուն մէջ անիկա պաշտպանած է լեռնականներուն վարկը ու տոկոսով վճարած հաւասարէ հաւասար ճակատումները: Ա' գեղին աղբէրն է, վասնզի ամէն մարդ իր բերնէն կ'ելլէ այդպէս փաղաքշուած, նոյնիսկ չորս տարեկան մանուկը:

Կը նայիմ, հետզհետէ ոճերուն մտահոգութեամբ, պլոտոդ սիկարին: Սուրճը հրամցուած է արդէն: Տրիբունը օձիքս իր ձեռքը ամուր բռնած: Աքլորամ' ըտը: Ստիպւած եմ սակայն բան մը ընել, այնքան փափուկ է կացութիւնը: Արդէն ձիերը կ'երեւան:

-Ներեցէք, պարոն, կրնա՞մ հարցնել, թէ ով էք:

-է՛տ, է՛ս ըսպէին:

Շեշտը, մա'նաւանդ հայեացքին վերնադիր արձակութիւնը դիւր են դարձեր ամբոխին, որ թեթեւ քմծիծաղով մը կը կանգնի քաջալեր թերեւս ատոր կարիքը չզգացող տրիբունին, քանի որ կը կրկնէ, երբ ոչ ոք իրմէ կ'ուզէր ատիկա:

-է՛տ. կը հասկանաք էլի շուտով: